



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 ապրիլի 2019 թվականի թիվ 38-Ս

ք. Երևան

«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2019 թվականի փետրվարի 28-ին հարուցված թիվ 2 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2019 թվականի փետրվարի 28-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմումում նշված է հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊ ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) կողմից խախտում կատարելու փաստի վերաբերյալ: Ըստ դիմողի՝ Ընկերությունը առանց հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր կնքելու իրականացնում է «РТР-Планета», Российский Информационный Канал «Россия-24» և «НТВ Мир» հեռուստաձրագրերի վերահեռարձակում: Իրավատերը հանդիսանում է վերոնշյալ հեռուստաձրագրերի բացառիկ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը 2019 թվականի մարտի 15-ին դիմում է ներկայացրել Հանձնաժողով և խնդրել դադարեցնել Ընկերությանը տրված լիցենզիայի գործողությունը:

Հանձնաժողովը 2019 թվականի մարտի 18-ի թիվ 26-Ս որոշմամբ դադարեցրել է Ընկերությանը տրված լիցենզիայի գործողությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ դադարեցվել է Ընկերությանը տրված լիցենզիայի գործունեությունը և Ընկերությունը հեռուստառադիոձրագրերի

վերահեռարձակում չի իրականացնում, հետևաբար Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

8) այդ մասին կա լիցենզավորված անձի դիմումը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է Հանձնաժողովի որոշմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

ե) փոխվել է դիմողի կարգավիճակը, որն օրենքի ուժով բացառում է դիմումով հայցվող վարչական ակտի ընդունումը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 61-րդ հոդվածի 4-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետով սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2019 թվականի մարտի 18-ի թիվ 26-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԵՄԻՆՈՒՄ ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

04 ապրիլի 2019թ.
ք. Երևան